որ այժմ Նոր-Բայազետ գավառ, Վաղարշապատ, 1895, էջ 93/: Այս արտաղրական կառույցում ջրի ուժով միաժամանակ ձիթհան, ջրաղաց և սղոցարան են բանեցրել:

5. Երևույթն ինքնին ուշագրավ է մասնավորապես արտաղրաեղանակի տեխնիկական լուծման առումով, ուստի կարիք ունի հետագա համակողմանի պրպտումների՝ վերջնական եզրահանգման գալու համար:

Ա.Ս.ՂԱԶԻՑԱՆ
ՀԱԻ

ԹԱԳԱՎՈՐԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԺԱՌԱՆԳԵԼՈՒ ՄԻ ՀՆԱԳՈՒՅՆ ՍՈՎՈՐՈՒՅԹԻ ՄԱՍԻՆ

/մեկնաբանության փորձ՝
ըստ հայ ժողովրդական հեքիաթի մի տիպի/

1. Հայ ժողովրդական բանահյուսությունից հայտնի է ,,ճակատագիրը չի ջնջվի,, ընդհանուր վերտառությամբ հեքիաթների մի խումբ, որը տարածված է եղել պատմական Հայաստանի մի շարք գավառներում: Հեքիաթի տարբերակները գրի են առնվել 1860-1970-ական թվականներին /մեր ձեռքի տակ կա շուրջ 20 տարբերակ/:

2. Հեքիաթի սյուժեն սկսվում է ճակատագրի սահմանումով ու գուշակությամբ և ավարտվում է կանխանշվածի, ի վերուստ սահմանվածի իրականացմամբ: Սոցիալական ցածր մակարդակ ունեցող ծնողներից ծնվում է մի տղա: Շրջազայության դուրս եկած թագավորն ականատես է լինում, թե ինչպես ճակատագիր տնօրինողները գրում են ծնվելիք տղայի ճակատագիրը, այն է՝ տղան ապագայում պետք է տիրանա թագավորական գահին: Չնայած թագավորի գործադրած ջանքերին՝ ոչնչացնելու ապագա մրցակցին, տղան մեծանում է, ամուսնանում թագավորի աղջկա հետ և ժառանգում է նրա գահը:

3. Հեքիաթի սյուժեի զարգացումը և ավարտը հանգեցնում է ճակատագրի անխուսափելիության գաղափարին: Սակայն տվյալ հանգամանքը հեքիաթի բուն բովանդակության համար ունի ածանցյալ նշանակություն: Իրապես այն ներկայացնում է դրվագների մի հաջորդական շղթա, որը պահպանել է հիշողություններ թագավորական իշխանությունը ժառանգելու ձևերի վերաբերյալ:

4. Հասարակության զարգացման նախնական փուլում թագավորական իշխանությունը փոխանցվել է թագավորի աղջկա միջոցով՝ նրա հետ ամուսնացողը ժառանգել է գահը: Վերոհիշյալ հեքիաթի սյուժեն ար-

տացոլում է իշխանությանը տիրանալու այս հղանակի հետ առնչվող պատկերացումներ և սովորություններ:

5. Հասարակության զարգացման որոշ փուլում թագավոր-հավակնորդի սոցիալական ծագումը կարևորություն չի ունեցել: Թագավորը, որ նաև քրմապետն էր, պետք է օժտված լիներ ֆիզիկական, մտավոր և հոգևոր ակնառու կարողություններով: Այդուհանդերձ, թագավորի անձին վերագրվել է արտասովոր ծագում ու գերբնական հատկություններ:

6. Հեքիաթի բոլոր տարբերակներում տեղ են գտել նվիրագործման ծեսին և տոտեմիստական պատկերացումներին առնչվող իրողություններ: Հեքիաթի մանուկ հերոսը տարվում է անտառ, նրան կերակրում են պաշտամունքային նշանակություն ունեցող կենդանիներ /եղջերու, այծ/, խնամում, պահում են հովիվը, անտառում ապրող միայնակ պառավը:

7. Հայ ժողովրդական հեքիաթի սուն տիպում պահպանված իրողությունների հիշողությունները հաստատվում, ամբողջացվում ու մեկնաբանվում են հայ մատենագրության և ազգագրության հայտնի մաստերով ու վկայություններով, ինչպես նաև առաջավորասիական հին ժողովուրդների պատմության, ազգագրության տվյալներով:

Հ.Տ.ՄԱՐՈՒՔՅԱՆ
ՀԱԻ

ՀԱՅ ԳՅՈՒՂԱԿԱՆ ԲՆԱԿԱՐԱՆԻ ՆԵՐՍՈՒՅԹԻ /ԻՆՏԻՐՅԵՐ/ ՏԻՊԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋ

1. Նյութական մշակույթի տարրերը, մասնավորապես բնակարանը, էթնիկ առանձնահատկության կարևորագույն կրողներից են: Ընդորում, բնակարանի նման դերը ենթադրում է ոչ միայն դրա կառուցվածքային /որն առավելապես մարտարվեստական հանգամանք է/, այլև ներսույթի կազմակերպման և ձևավորման /որն էլ հենց ազգագրության խնդիրն է/ առանձնահատկությունների անպայման հաշվառում: Եթե տարբեր ժողովուրդների մեջ կարող են դիտվել նույն տիպի բնակելի տներ, ապա դրանց ներսույթը՝ որպես արգասիք տվյալ էթնիկ ընդհանրության կենցաղամշակութային առանձնահատկություններ, անպայման տարբեր է լինում:

2. Հայաստանում տարածված բնակելի տները բաժանվում են երկու մեծ խմբի՝ երդիկավոր և աներդիկ: Երդիկավոր տները հանդես